ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEE1-646E-4153-ADB6 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/0640/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.02.2026թ. **ք. Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ.Բունիաթյանի, քննարկելով թիվ ԵԴ2/0640/02/26 քաղաքացիական գործով ըստ հայցի «Լեգալթրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 13.01.2026 թվականի թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու, գնահատող հանձնաժողովին մրցույթը չեղյալ հայտարարելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի կողմից ներկայացված գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>1. Գործի դատավարական նախապատմությունը.</u>

«Լեգալթրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից 22.01.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 13.01.2026 թվականի թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու, գնահատող հանձնաժողովին մրցույթը չեղյալ հայտարարելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1. կետի համաձայն՝ դատավորի աշխատակազմի կողմից 29.01.2026 թվականին հեռախոսային հաղորդակցության միջոցով հայցվոր կողմը տեղեկացվել է հայցադիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների խախտմամբ ներկայացված լինելու վերաբերյալ, որը հայցվորի ներկայացուցիչ Վահագն Պավելի Գասպարյանի կողմի կողմից շտկվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի

02.02.2026 թվականի որոշմամբ ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ, որոշվել է գործը քննել դատական նիստում և 2026 թվականի փետրվարի 17-ին հրավիրվել է դատական նիստ:

06.02.2026 թվականին ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի կողմից դատարան է ներկայացվել գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդություն:

2. Միջնորդությամբ հանդես եկած կողմի՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փաստարկների և իրավական դիրքորոշման հակիրճ բովանդակությունը.

ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի կողմից 06.02.2026 թվականին դատարան է ներկայացվել գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդություն, որով հայտնել է, որ դատարանի կողմից թիվ ԵԴ2/0640/02/26 քաղաքացիական գործը 02.02.2026 թվականին ընդունվել է վարույթ, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի ուժով գնման գործընթացը կասեցվել է մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 234.11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 234.6-րդ հոդվածի 5-րդ մասը՝ նշել է, որ «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշմամբ, որով բողոքարկվում են գնահատող հանձնաժողովի որոշումները (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների), գնման գործընթացը կասեցվում է՝ օրենսգրքի 234,6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Միաժամանակ, այն դեպքում, երբ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, ապա դատարանը, կողմի գրավոր միջնորդության հիման վրա, կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

Հայտնել է, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է գրավոր և բանավոր թարգմանչական ծառայությունների ձեռքբերման նպատակով: 2025 թվականի համար մատուցված թարգմանչական ծառայությունների պայմանագիրը ավարտվել է և հայտարարվել է 2026 թվականի համար թարգմանչական ծառայությունների մատուցման մրցույթ՝ նկատի ունենալով, որ 2026 թվականի համար մրցույթը կարող էր հայտարարվել միայն բյուջեի ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում: Սակայն սույն դատական գործով գնման գործընթացը, հայցը վարույթ ընդունված լինելու հիմքով, կասեցվել է, ինչը ՀՀ ներքին գործերի նախարարության և նախարարությանը ենթակա մարմինների (ստորաբաժանումների) կողմից իրականացվող քրեական և վարչական վարույթների շրջանակներում ստեղծում է բարդություններ: Հայերեն լեզվին չտիրապետող անձանց իրավունքները չխախտելու համար անհրաժեշտ է լինում ներգրավել թարգմանիչների և հանրային շահից ելնելով, ինչպես նաև նկատի ունենալով ՀՀ սահմանադրությամբ ամրագրված՝ անձի լսված լինելու իրավունքի ապահովման՝ վարչական մարմնի պարտականությունը, պետք է մատուցվեն պատշաճ թարգմանչական ծառայություններ:

Գնման գործընթացի կասեցման արդյունքում ՀՀ ներքին գործերի նախարարությունը առնվազն 1-2 ամիս չի կարողանալու ապահովել թարգմանչական ծառայություններ քրեական և վարչական վարույթների շրջանակներում: Նման պայմաններում, քրեական և վարչական վարույթների իրականացումը ոչ միայն չի լինի իրավաչափ, այլև՝ փաստացի կլինի անհնար: Միևնույն ժամանակ, գնման գործընթացը կասեցված լինելու պարագայում կխաթարվի «Գնումների մասին» օրենքի հիմնական նպատակներից մեկը, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Նշել է, որ վարչական և քրեական վարույթներով անձանց թարգմանչի ծառայություններով ապահովելը, օրենքով նախատեսված դեպքերում, հանդիսանում է պետության պարտականությունը և բնութագրում է ոչ թե առանձին վերցրած անձի իրավունքների պաշտպանությունը, այլ՝ պատշաճ իրավակարգ և օրինականություն ապահովելու՝ պետության մոտեցումը, որը դուրս է գալիս նեղ անձնական շահերից և բնորոշում է ընդհանուր հանրային շահը, իրավական պետության սահմանադրական գաղափարի կենսագործումը: Ելնելով հանրային շահից դատարանին միջնորդել է վերացնել գնման գործընթացի կասեցումը՝ ապահովելու համար ՀՀ ներքին գործերի նախարարության ծառայողների արդյունավետ աշխատանքը՝ ի նպաստ հասարակության անվտանգության և հանրության իրավունքների պաշտպանության:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը դատարանին միջնորդել է ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար գրավոր և բանավոր թարգմանչական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16 ծածկագրով մրցույթով գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը բավարարել, վերացնել ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16 ծածկագրով գնման գործընթացի՝ օրենքի ուժով կասեցումը:

3. Դատարանի պատճառաբանությունները, վերլուծությունները և եզրահանգումները.

Դատարանն, ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը և պատասխանողի ներկայացուցչի՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը, գտնում է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Տվյալ դեպքում, «Լեգալթրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից 22.01.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 13.01.2026 թվականի թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու, գնահատող հանձնաժողովին մրցույթը չեղյալ հայտարարելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.02.2026 թվականի որոշմամբ ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ, որոշվել է գործը քննել դատական նիստում և 2026 թվականի փետրվարի 17-ին հրավիրվել է դատական նիստ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.02.2026 թվականի որոշումը համակարգային ծանուցման եղանակով, ինչպես նաև պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով 02.02.2026 թվականին ուղարկվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի կողմից 06.02.2026 թվականին դատարան է ներկայացվել գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդություն:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի **հավելվածի** 6.1.-ին հոդվածի համաձայն՝ ներքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանության, մարդու անվտանգության, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության, հանցանքների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, հայտնաբերման, խափանման, բացահայտման և պետական վիճակագրության վարման, հետախուզվող անձանց և տրանսպորտային միջոցների հայտնաբերման, ճանապարհային երթևեկության անվտանգության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների պահպանման ապահովման, միգրացիոն գործընթացների կառավարման, համակարգման և իրավիճակի մոնիտորինգի, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտքի վիզաների տրամադրման, կացության կարգավիճակների տրամադրման, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացի, փախստականի կարգավիճակի ճանաչման և ապաստանի տրամադրման, քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման, անձնագրային միասնական համակարգի գործունեության կազմակերպման, անձանց փաստաթղթավորման և նույնականացման, օտարերկրացիների կամավոր վերադարձի և արտաքսման, Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու հետ կապված հարաբերություններում տեղեկատվության փոխանակման, բնակչության պետական և ընտրողների ռեգիստրների վարման ու ընտրողների ցուցակների կազմման, տրանսպորտային միջոցների պետական գրանցման և հաշվառման, հաշվառման համարանիշների և վարորդական իրավունքի տրամադրման, մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզավորման, զենքի առևտրի, զենքի հարդարման, հրաձգարանների գործարկման լիցենզավորման և շրջանառության մեջ գտնվող ապօրինի զենքի առգրավման, առանց հսկողության մնացած գույքի պահպանության հետ կապված հարաբերությունների կարգավորման ոլորտներում, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, բնածին և տեխնածին աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցմանն ու վերացմանն ուղղված աշխատանքների իրականացման, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման

և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանման գործընթացների պետական կարգավորման ու դրա իրականացման աշխատանքների ապահովման, նշված ոլորտների խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման և կազմակերպման, նշված ոլորտներում կառավարման իրականացման, հումանիտար արձագանքման գործողությունների իրականացման, նյութական պահուստի պաշարների ձևավորման, պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման, պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրության, ներմուծման (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող նյութերի և պայթեցման սարքավորումների), պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի, պահեստավորման, տեղափոխման կամ կիրառման (շահագործման), հրագործական արտադրատեսակների արտադրության, ներմուծման (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող արտադրատեսակների), հրագործական արտադրատեսակների կիրառման (շահագործման), առևտրի (իրացման), պահեստավորման և տեղափոխման (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն կենցաղային նշանակության I և II դասերի արտադրատեսակների պահեստավորմանը և տեղափոխմանը) և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզիաների տրամադրման, պետական և համայնքային նշանակության կամ պետական և համայնքային մասնակցությամբ միջոցառումների համար հրագործական արտադրատեսակների ներմուծման և կիրառման թույլտվության տրամադրման, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման, տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հաշվառման, ինչպես նաև լիցենզավորման ծառայությունների մատուցման ապահովման, արտակարգ իրավիճակների, աղետների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բուժօգնության ցուցաբերման և բուժտարահանման միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպչական և ռազմավարական հիմունքների մշակման, Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման մասնակցության (խաղաղ ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովման ուղղությամբ քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, դրանց ծավալման և կիրառման պլանավորումը և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում այդ ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի) ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական վարույթի ընթացքում դրա մասնակիցների համար օրենսդրորեն երաշխավորված է լսված լինելու իրավունքը:

Դատարանն արձանագրում է, որ լսված լինելու իրավունքը անձի պատշաճ վարչարարության իրավունքի կարևոր մաս է կազմում, իսկ այդ իրավունքի ապահովման պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածից, որով ամրագրված է մարդու՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ իրավունքը: Լսված լինելու իրավունքը արդյունավետ պաշտպանության կարևոր միջոց է, քանի որ այդ իրավունքի իրացմամբ մի կողմից վարչական վարույթի մասնակիցները հնարավորություն են ստանում վարչական վարույթին մասնակցելու, ապացույցներ ներկայացնելու, վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշումներ և փաստարկներ ներկայացնելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա, մյուս կողմից, դա նպաստում է վարչական մարմնի կողմից գործի բոլոր հանգամանքների ամբողջական և համակողմանի պարզմանը: Ըստ այդմ, վարչական մարմինները պարտավոր են լսել անձին:

Նկատի ունենալով, որ թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16» ծածկագրով գնման գործընթացը կազմակերպվել է ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար՝ գրավոր և բանավոր թարգմանչական ծառայությունների ձեռք բերման նպատակով և հաշվի առնելով, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի **հավելվածի** 6.1.-ին հոդվածով Ներքին գործերի նախարարության գործունեության ոլորտը, քրեական և վարչական վարույթների շրջանակներում այլոց իրավունքների պատշաճ ապահովման անհրաժեշտությունը, դատարանը հանգում է հետևության առ այն, որ այն ունի հանրային, կարևոր նշանակություն և վերաբերում է հանրային շահերին՝ դատարանը գտնում է, որ պետք է թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը վերացնել:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ, 134-րդ, 135-րդ 199-րդ, 200-րդ, 361-րդ, 362-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/0640/02/26 քաղաքացիական գործով ըստ հայցի «Լեգալթրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 13.01.2026 թվականի թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու, գնահատող հանձնաժողովին մրցույթը չեղյալ հայտարարելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի կողմից ներկայացված գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը բավարարել:
2. Վերացնել թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:
3. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051
Date: 2026.02.11 18:56:56 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝